

<<ՀԱՅԲԻԶՆԵՄԱՆԿ>> ՓԲԸ հայտարարում է մրցույթ՝ Երևան քաղաքի մասնաճյուղերում Ֆինանսական խորհրդատուների ներգրավման համար

Աշխատատեղի անվանումը՝ Ֆինանսական խորհրդատու (Երևան քաղաքի մասնաճյուղեր)

Աշխատանքային պարտականություններ

- Տրամադրում է խորհրդատվություն բանկային ծառայությունների ողջ ծավալով
- Իրականացնում է վաճառքներ
- Հանդիսանում է փոքր և միջին բիզնեսի վարկերի ներգրավման պատասխանատու
- Հարկ եղած դեպքում իրականացնում է մոնիթորինգ՝ փոքր բիզնեսի և գրավադրմամբ վարկերի տրամադրման նպատակով
- Բանակցում է կազմակերպությունների ղեկավարների հետ, կազմակերպում պրեզենտացիաներ
- Կազմում և ձևակերպում է վարկային պրոդուկտի հաճախորդի փաթեթը, կատարում է պրոդուկտի պահանջներին համապատասխանության նախնական ստուգում
- Իրականացնում է վարկային պրոդուկտների պայմանագրերի ձևակերպում՝ տվյալների ներմուծում համակարգ
- Կազմում, կնքում է վարկային պայմանագրեր, կատարում է վարկի և/կամ տոկոսների մարման գործարքներ
- Հաճախորդներին տրամադրում է ամբողջական տեղեկատվություն վարկի սպասարկման պայմանների մասին
- Գործընթացի/պրոդուկտի պահանջներին համապատասխան տրամադրում է խորհրդատվություն խնդրահարույց/պոտենցիալ խնդրահարույց վարկառուներին գործող ժամկետանց վարկերի վերավարկավորման վերաբերյալ

Պահանջվող կրթություն և հմտություններ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային համակարգում աշխատանքային փորձը կղիտվի որպես առավելություն
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության իմացություն
- Ֆինանսական վերլուծությունների իրականացման կարողություն
- Հաշվետվությունների պատրաստման կարողություն
- Թիմային աշխատանքի, շփման և բանակցությունների վարման հմտություններ
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և հետևում
- Լարված աշխատանք կատարելու ունակություն, կոնֆլիկտների և սթրեսի կառավարման ունակություն
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Հայերենի գերազանց տիրապետում, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Համակարգչային գիտելիքների իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 17.02.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Financial Adviser, Yerevan – Name, Surname":

Մրցույթի անցկացման վայրը՝ "ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ" ՓԲԸ Գլխավոր գրասենյակ,
ք. Երևան, Նալբանդյան 48: